««ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-1177-29.10.2025-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	**Առաջարկության հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	ՀՀ կառավարություն	«Պետական գույքի կառավարման մասին» օրենք	Առաջարկվում է օրենքների նախագծերի փաթեթը լրացնել ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով, որի համաձայն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը կլրացվի հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով. «6. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքով սահմանված հուշարձանների, այդ թվում՝ հուշարձանների պետական ցուցակներում ներառված պաշտամունքային կառույցների վրա, որոնց հատուցմամբ կամ անհատույց օտարման դեպքում կիրառվում են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքով սահմանված կարգավորումները.»:	Չի ընդունվել	Չի ընդունվել
2.	ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան	««Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»	Առաջարկվում է նախագծի առաջին հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է

		(Պ-1177^{3}-29.10.2025-ԳԿ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված			
3.	ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան	««Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-1177^{3}-29.10.2025-ԳԿ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է 1-ին հոդվածում նշված «Ն-0333-1» օրենքի հերթական համարը փոխարինել «Հ.Ն-0333-1» ձեւակերպմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է